ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/74 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով ապրանքների /բուժկետ՝ 18 դպրոց/ գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 29.09.2023թ. ժամը 15:45-ին էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Ավետիսյան

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Մարտիրոսյան

Հովհաննես Պողոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լիանա Խառատյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«Դոնեռ»ՍՊԸ	donernorq@yandex.ru
2	«Մեդտեխսերվիս» ՍՊԸ	medtechservice@mail.ru

3. Հակադարձ աճուրդի արդյունքում յուրաքանչյուր չափաբաժնի մասով համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3. 1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները՝

Հ/Ր	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները			
		«Դոնեռ» ՍՊԸ		Մեդտեխսերվիս ՍՊԸ	
		Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ			
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն
1	810000	675000	810000	-	-
2	1656000	1380000	1656000	-	-

3	1800000	1500000	1800000	-	-
4	936000	780000	936000	-	-
5	324000	270000	324000	-	-
6	810000	24999999	29999998	801000	801000
7	810000	1450000	1740000	1431900	1431900

5. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.

5.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման նպատակով հանձնաժողովի նիստը կասեցնել և շարունակել հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 02.10.2023թ

6. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.

6.1 «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6.2 «Դոնեռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, մասնավորապես՝ բացակայում է հավելված 1.3 իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի հղումը, իսկ ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

- հավելված 1 դիմում հայտարարության մեջ սխալ է նշված ընթացակարգի ծածկագիրը
- հավելված 1 դիմում հայտարարության մեջ նշված չափաբաժինները չեն համապատասխանում փաստացի համակարգում նշված չափաբաժիններին
- հավելված 1 դիմում հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ,
- բացակայում է 1-5 չափաբաժիններով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել **«Դոնեռ» ՍՊԸ**–ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.2 կետով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7.2 Հանձնաժողովի նիստը շարունակել **«Դոնեռ» ՍՊԸ** –ի կողմից անհամապատասխանությունները շտկելուց հետո՝ ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 04.10.2023թ.

8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

8.1 **«Դոնեռ» ՍՊԸ**- ն սահմանված ժամկետում շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

9. Տվյալներ առաջին տեղ գբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

9.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից.

1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Դոնեռ» ՍՊԸ-ին:

6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Մեդտեխսերվիս» ՍՊԸ -ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

9.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժել «Դոնեռ» ՍՊԸ-ի հայտը՝ 7-րդ չափաբաժնով:

Ընդունվել է որոշում՝ ***կողմ 3, դեմ 0:***

9.3 «Դոնեռ» ՍՊԸ-ի հայտը՝ 6-րդ չափաբաժնով, մերժվել է համակարգի կողմից՝ գնային առաջարկը նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

10. Գնահատման արդյունքների մասին

10.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Արմեն Ավետիսյան /նախագահ/

---------- Հարություն Մարտիրոսյան

---------- Հովհաննես Պողոսյան

---------- Լիանա Խառատյան /քարտուղար/